ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԵԿ ՀՐԱՆՏԻ

ԿՈՆՍՈՑԻԱՏԻՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2020

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ГРИГОРЯН НАРЕК ГРАНТОВИЧ

ЭФФЕКТИВНОСТЬ ПОДХОДА КОНСОЦИАТИВНОЙ ДЕМОКРАТИИ В СИСТЕМЕ ПАРЛАМЕНТСКОГО ПРАВЛЕНИЯ (НА ПРИМЕРЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ)

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 - "Политические институты и процессы, международные отношения"

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН 2020

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ քաղ. գիտ. դոկտոր՝ **Լ. Ղ. Շիրինյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քաղ. գիտ. դոկտոր՝ **Տ. Տ. Քոչարյան**

քաղ. գիտ. դոկտոր՝ **Խ. Ս. Գալստյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Երևանի պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2020 թ. հոկտեմբերի 9-ին ժամը 12:00-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Քաղաքագիտություն» 056 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ ՀՀ ք. Երևան 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020 թ. օգոստոսի 28-ին:

056 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ **Վ. Ս. Պետրոսյան**

Тема диссертации утверждена в Институте философии, социологии и права НАН РА

Научный руководитель: доктор пол. наук **Л. К. Ширинян**

Официальные оппоненты: доктор пол. наук **Т. Т. Кочарян**

доктор пол. наук **Х. С. Галстян**

Ведущая организация: **Ереванский государственный университет**

Защита диссертации состоится 2020 года в 09 октября 12:00 часов на заседании действующего в ЕГУ РА специализированного совета 056 “Политические науки” ВАК РА. (адрес: РА, г. Ереван 0025, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.

Автореферат разослан 28-го августа 2020 г.

Научный секретарь
специализированного совета 056,
кандидат ист. наук, **В. С. Петросян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Միջազգային և ազգային քաղաքական գործընթացներում արդյունավետ քաղաքական վարչակարգի և պետական կառավարման համակարգերի ընտրության խնդիրը միշտ եղել է տեսաբանների և քաղաքական գործիչների ուշադրության կենտրոնում: Մեր օրերում առավել կարևոր խնդիրների շարքին է դասվում նաև ժողովրդավարության մոդելի ընտրությունը, քանի որ դրանով է պայմանավորված տվյալ քաղաքական համակարգի լավ կառավարումը (good governance) և զարգացման միտումները: Այստեղ է, որ հատվում են կոնսոցիատիվիզմի և խորհրդարանականության համատեղ կիրառության հարցերը: Կոնսոցիատիվ ժողովրդավարության (consociational democracy) տեսահայեցակարգային մոտեցումները պատկանում են նիդերլանդական ծագմամբ, ամերիկացի քաղաքագետ Ա. Լեյփհարթին, որը այն ձևակերպել է 1975-1980-ական թվականներին: Այս տեսությունը մինչ օրս էլ արդիական է և լայն տեսագործնական նշանակություն ունի բազմաթիվ պետություններում: Լեյփհարթը ներդաշնակ համահասարակական կառավարման հիմնական նախապայմանը համարում է բոլորի ներգրավվածությունը քաղաքական գործընթացներում: Աշխատանքում նրա մոտեցումները ներկայացվում են ժողովրդավարության՝ վեստմինստերյան և կոնսոցիատիվ տեսությունների հակադրության միջոցով:

Վեստմինստերյան ժողովրդավարությունը, լինելով մեծամասնական շահերը արտահայտող մոդել, հաշվի չի առնում հասարակության բոլոր շերտերի շահերը, հետևաբար ներկայացվածության մակարդակն ու բովանդակությունը բխում է մեծամասնության, այլ ոչ թե ընդհանուրի կամ համամասնության շահերից: Այս խնդրին լուծում չտալը անկանխատեսելի հետևանքների կարող է հանգեցնել: Նկատի ունենալով սա, Լեյփհարթն առաջարկել է ժողովրդավարության կոնսոցիատիվ* մոդելը: Նա, չորս մեթոդական սկզբունքների ներկայացմամբ, ձևակերպել է այն հիմնական տեսահայեցակարգային մոտեցումները, որոնք, հաշվի առնելով բազմակազմ (plural) հասարակության հատվածականությունը և խնդիրները, փորձում են բոլոր դիրքերից նպաստել սոցիալական համակեցությանը և լավ կառավարմանը:

Կոնսոցիատիվիզմը, անկախ տեսության ծագման վաղեմությունից, գրեթե միշտ արդիական է մի քանի պատճառներով. նախ՝ աշխարհի գրեթե բոլոր պետությունների հասարակությունները (քիչ թե շատ) հատվածական են, հետո՝ այդ հատվածականությունն իր մեջ ներառում է բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումներ տալու հիմնական միջոցը ոչ թե մեծամասնության շահերի ներկայացումն է, այլ համամասնական եղանակով քաղաքական

---

* Հայկական քաղաքագիտական հանրույթի կողմից որպես տվյալ եզրույթի հայերեն համարժեք գործածվում են՝ «համահամայքավարական», «համահասարակական», «համասոցիալական» և «ընկերակցային» ձևերը:

գործընթացներին մասնակցությունը և նեղ հատվածական շահեր ունեցողների կողմից քաղաքական դիրքորոշումների ներկայացումը: Ավելին, կոնսոցիատիվիզմը մինչ օրս դասական և հիբրիդային դրսևորումներ ունի աշխարհի տարբեր պետություններում: Այս առումով հիշարժան է Ա. Լեյփհարթի «Ժողովրդավարության օրինակները երեսունվեց երկրներում. կառավարման և իրականացման ձևերը» աշխատությունը, որտեղ նա մանրամասն անդրադառնում է մեր օրերում կոնսոցիատիվիզմի կիրառության տարբեր պետությունների օրինակներին: Առհասարակ կոնսոցիատիվիզմի խնդիրը ոչ միայն հասարակության բոլոր հատվածների ներգրավումն է ներքաղաքական գործընթացներում, այլև այդ հիմքով եղած հասարակության բոլոր շերտերի դժգոհությունները կանխարգելումն ու հնարավոր կոնֆլիկտների բացառումը: Ուստի, կոնսոցիատիվիզմի «առաքումը» Հարավային Կովկասի տարածաշրջանի պետությունների դեպքում միջազգային հարաբերություններում համագործակցության տեսանկյունից կարող է դրական և արդյունավետ նախադեպ ստեղծել առաջընթաց զարգացման համար:

Կոնսոցիատիվիզմի արդիականությունը նաև պայմանավորված է տարբեր կառավարման համակարգերում և տարածքային կազմակերպման ձևերում կիրառելիության ճկունությամբ: Անշուշտ, Լեյփհարթը կոնսոցիատիվիզմի դասական մոդելն առաջ է քաշում դաշնային պետության օրինակով, սակայն գիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ կոնսոցիատիվիզմի գաղափարական մոտեցումները մեր օրերում կարելի է տեղայնացնել նաև միատարր (unitary) հասարակություններում: Ինչ վերաբերում է պետական կառավարման համակարգին, ապա այստեղ կոնսոցիատիվ ժողովրդավարության կիրառությունը հիմնականում ուղեկցվում է խորհրդարանականության համադրությամբ, ինչը, սակայն, նախապայման չէ: Նախագահական և կիսանախագահական կառավարման պարագայում ևս հնարավոր է հասնել կոնսոցիատիվ մոդելի արդյունավետ կիրառմանը: Այդ հարցում առանցքային նշանակություն ունի քաղաքական կամքը և անհրաժեշտ միջոցների ճիշտ համադրումը:

Հետևաբար խորհրդարանական կառավարման համակարգում կոնսոցիատիվ ժողովրդավարության մոտեցման կիրառման հնարավորությունն ու արդյունավետությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանականության արդյունավետության բարձրացման նպատակով կոնսոցիատիվիզմի ներդրման հնարավորությունների ուսումնասիրությունն առավել քան արդիական են:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Առհասարակ կոնսոցիատիվիզմի և խորհրդարանականության վերաբերյալ հետազոտություններն այդքան էլ շատ չեն: Կոնսոցիատիվիզմի վերաբերյալ

հետազոտություններ իրականացրել են տեսության հիմնադիր Ա. Լեյփհարթը[1], ինչպես նաև Մ. Քվորթրուփը[2], Ի. Լյուստիկը[3], Ռ. Շենդելնը[4], Բ. Օլիրին[5], Ջ. Մաքգարրին[6], Ջ. Սարտորին[7] և ուրիշները: Վերջիններս իրենց հետազոտություններում մասնավորապես կենտրոնացել են կոնսոցիատիվիզմի, խորհրդարանականության ընդհանրական ճանաչողական ուսումնասիրությունների վրա: Կոնսոցիատիվ տեսության հիմնադիր Ա. Լեյփհարթն իր՝ «Ժողովրդավարությունը բազմակազմ հասարակություններում. համեմատական վերլուծություն» գրքում ձևակերպել է տեսության հիմնական դրույթները, մեթոդական սկզբունքները, իրագործման շրջանակը, ինչպես նաև տարբեր պետություններում կոնսոցիատիվ ժողովրդավարության ներդրման գիտակիրառական խնդիրները: Աշխատանքի շրջանակներում ներկայացված «կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելն» ամփոփ ուրվագծում է տեսության կիրառման մեխանիզմները և տարբեր պետություններում (Կիպրոս, Բելգիա, Նիդերլանդներ, Լիբանան, Հարավաֆրիկյան Հանրապետություն, Շվեյցարիա) կոնսոցիատիվիզմի միջազգային փորձի օրինակները: Բ. Օլիրին և Ջ. Մաքգարրին իրենց հետազոտություններում անդրադառնում են հետկոնֆլիկտային պետություններում իշխանության կիսմամբ (power sharing) կոնսոցիատիվ ժողովրդավարության կիրառման առանձնահատկություններին Հյուսիսային Իռլանդիայի օրինակով: Ռ. Շենդելենը, Ի. Լյուստիկը, Ջ. Սարտորին և ուրիշները քննադատում են կոնսոցիատիվ ժողովրդավարության տեսությունը՝ նշելով, որ հասարակության սեգմենտներին ինքնավարություն տալը կարող է հանգեցնել նրանց անջատողականության և այդ հիմքով ինքնորոշման գործընթացին: Ըստ նրանց՝ իշխանության կիսմամբ կոնսոցիատիվ ժողովրդավարության կիրառումը հասարակության մեծ ու փոքր խմբերի շրջանում կարող է տարբեր դժգոհություններ և բախումներ առաջացնել՝ հանգեցնելով քաղաքացիական պատերազմների սանձազերծմանը: Կոնսոցիատիվիզմի վերաբերյալ բավական համակողմանի և լուրջ հետազոտություններ են իրականացրել նաև հայ քաղաքագետներ Լ. Շիրինյանը,

---

[1] Lijphart A., Democracy in Plural Societies: A Comparative Exploration, New Haven, CT: Yale University Press, London, 1977.

[2] Qvortrup M., Michaelina J., Kuzu D., Consociationalism and Power Sharing in Europe, Palgrave Macmillan, Switzerland, 2007.

[3] Lustick I., Lijphart, Lakatos, and consociationalism, World Politics, № 50 (1), 1997, pp. 88-117.

[4] Scheindlin R., Critical Comments on Lijpart's Theory of Consociationalism Democracy, South African Journal of Political Studies, Vol. 10, Issue 1, 1983, pp. 6-32.

[5] O'Leary B., The 1998 British-Irish Agreement: Power-sharing plus, Scottish Affairs, № 26, 1999, pp. 14-35; McGarry J., O'Leary B., The Political Rregulation of National and Ethnic Conflict, A journal of Comparative Politics, Vol. 47, № 1, 1994, pp. 95-114.

[6] McGarry J., O'Leary B., The Political Regulation of National and Ethnic Conflict, A journal of Comparative Politics, Vol. 47, № 1, 1994, pp. 95-114.

[7] Sartori G., Parties and Party Systems: A Framework for Analysis, ECPR press, UK, 2005.

Հ. Սուքիասյանը, Է. Օրդուխանյանը[8]: Վերջիններս անդրադարձել են կոնսոցիատիվիզմի մի շարք գիտակիրառական հիմնախնդիրների, մասնավորապես՝ կոնսոցիատիվիզմի հետ սերտ առնչություն ունեցող քաղաքական մշակույթի, հասարակության սոցիալական կառուցվածքի և Հարավային Կովկասում կոնսոցիատիվ ժողովրդավարության կիրառման առանձնահատկություններին:

Խորհրդարանականության վերաբերյալ համեմատական հետազոտություններ են իրականացրել Խ. Շեյբուբին[9], Բ. Վերնորը[10], Ա. Շերբինինը[11] և ուրիշները: Ա. Շեյբուբին խորհրդարանականության վերաբերյալ իր հետազոտություններն իրականացրել է խորհրդարանականությունն և նախագահական կառավարման համակարգի՝ համեմատական վերլուծության տեսքով:

Խորհրդարանականության և համապատասխան քաղաքական մշակույթի վերաբերյալ ուսումնասիրությունները նույնպես շատ քիչ են, սակայն, ընդհանրացնելով եղածը, կարող ենք ասել, որ դրանք ավելի շատ արտահայտում են գործնական փորձը, քան՝ տեսական ձևակերպումները: Ավելին, գրեթե բոլոր հետազոտողները հանգում են այն եզրակացությանը, որ խորհրդարանականությունն ավելի շատ գործնական, քան տեսահայեցակարգային ձևակերպումների ոլորտ է: Ա. Շերբինինն իր աշխատանքներում ներկայացնում է խորհրդարանակնության քաղաքական մշակույթի հետ կապված խնդիրները՝ կենտրոնանալով խորհրդարանական կառավարման համակարգի տեսագործնական մոտեցումների վրա: Խորհրդարանականության և համապատասխան քաղաքական մշակույթի հարցերը հայ հետազոտական շրջանակներում բավարար չափով ուսումնասիրված չեն, սակայն խորհրդարանական կառավարման համակարգի պատմությանը և մշակույթին անդրադարձել է Հ. Հակոբյանը[12]՝ ներկայացնելով Հայաստանում խորհրդարանականության պատմաքաղաքակրթական ակունքները և իրացման ներուժը:

---

[8] Շիրինյան Լ., Սուքիասյան Հ., Օրդուխանյան Է., Հարավային Կովկասը կոնսոցիատիվ ժողովրդավարության համատեքստում, Լիմուշ հրատ., Երևան, 2018; Շիրինյան Լ., Սուքիասյան Հ., Օրդուխանյան Է., Կոնսոցիատիվ ժողովրդավարությունը, փափուկ ուժը և անվտանգության խնդիրները Հարավային Կովկասում, Լիմուշ հրատ., Երևան, 2019; Կոնսոցիատիվ ժողովրդավարություն (քաղաքական կազմաբանությունը և իրացման ներուժը), Գլխ. խմբ.՝ Լ. Շիրինյան, Լիմուշ հրատ., Երևան, 2017:

[9] Cheibub J., Presidentialism, Parliamentarism, and Democracy, Cambridge University Press, Cambridge, 2007.

[10] Vernon B., The Monarchy and the Constitution, Parliamentary Affairs, Vol. 49, Issue 3, 1996, pp. 407–422.

[11] Щербинин А., Щербинина Н., Парламентская культура: Коммуникативный аспект, Вестник Томского государственного университета: История, № 5 (25), 2013, сс. 68-70.

[12] Հակոբյան Հ., Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, ՀՅԴ հրատ., Երևան, 2007:

Ատենախոսության շրջանակներում ուսումնասիրվել են նաև քաղաքացիական հասարակության, քաղաքակրթության, քաղաքական մշակույթի, բազմիշխանության, խորհրդարանական դիվանագիտության, կուսակցական համակարգերի, արդիականացման տեսության, լավ կառավարման և այլ հարակից հարցեր: Այս առումով հատկանշական են Գ. Ալմոնդի և Ս. Վերբայի[13], Ս. Հանթինգտոնի[14], Ռ. Դալի[15], Գ. Հեգելի[16], Ֆ. Ֆուկույամայի[17], Ռ. Պուտնամի[18], Մ. Դյուվերժեյի[19], Կ. Պոպպերի[20], Ք. Շուլցի[21], Պ. Սորոկինի[22], Լ. Դայմոնդի[23], Ռ. Ինգլհարթի[24] և մյուս հեղինակների աշխատանքները: Քաղաքական մշակույթի հարցեր են շոշափել Գ. Ալմոնդը և Ս. Վերբան՝ միաժամանակ անդրադառնալով խորհրդարանականության մշակույթի էությանը: Նրանք իրենց հիմնարար հետազոտություններում ոչ միայն ներկայացրել են քաղաքական մշակույթի ընդհանուր բովանդակությունը, այլև առաջ են քաշել խորհրդարանականության քաղաքական մշակույթի կայացման և ինստիտուցիոնալացման խնդիրները: Ժողովրդավարական վարչակարգի պայմաններում իրականացվող դիվանագիտության և դրա հարկադիր բնույթին է անդրադառնում Ք. Շուլցը՝ կարևորելով ժամանակակից պետությունների ժողովրդավարացման գործընթացում դիվանագիտության դերն անվտանգային խնդիրների լուծման գործում: Քաղաքացիական հասարակության հարցերին է անդրադառնում Գ. Հեգելը՝ այն բնութագրելով որպես անհատների և մասնավոր հատվածների միջև շահերի իրականացման ոլորտ:

---

[13] Almond G., Verba S., The Civic Culture: Political Attitudes and Democracy in Five Nations, SAGE, USA, 1989.

[14] Huntington S., After Twenty Years: The Future of the Third Wave, Journal of Democracy, № 8 (4), 1997, pp. 3-12.

[15] Dahl R., Polyarchy: Participation and Opposition, New Haven, Yale University Press, USA, 1971;

Dahl R., Preface to Democratic Theory, University of Chicago Press, London, 1956;

Dahl R., A Democratic Dilemma: System Effectiveness and Versus Citizen Participation, Political Science Quarterly, № 109 (1), 1994, pp. 23-34.

[16] Hegel G., Elements of the Philosophy of Rights, Cambridge University Press, Cambridge, 1991.

[17] Fukuyama F., Social Capital and Civil Society, IMF, UK, 2000.

[18] Putnam R., Making Democracy Work: Civic Traditions in Modern Italy, Princeton University Press, USA, 1993.

[19] Duverger M., A New Political System Model: Semi-Presidential Government, European Journal of Political Research (quarterly), № 8 (2), 1980, pp. 165-187.

[20] Popper K., The Open Society and its Enemies, Routledge Classics, London, 2011.

[21] Schultz K., Democracy and Coercive Diplomacy, Cambridge University Press, Cambridge, 2009.

[22] Сорокин П., Человек. Цивилизация. Общество, Политиздат, Москва, 1992.

[23] Dimond L., Three Paradoxes of Democracy, II Journal of Democracy, Vol. 1, № 3, 1990, p. 48.

[24] Inglehart R., Welzel Ch., Modernization Cultural Change, and Democracy: The Human Development Sequence, Cambridge University Press, Cambridge, 2005.

Այդուհանդերձ, կարող ենք նշել, որ «Կոնսոցիատիվ մոտեցման կիրառությունը խորհրդարանականության համատեքստում» թեմայով գիտական հետազոտություններ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային մակարդակով մինչ օրս չեն իրականացվել: Ուստի, հաշվի առնելով վերոնշյալ գիտնականների կատարած էական հետազոտությունները, սույն ատենախոսությունը ևս մեկ նորարարական մոտեցումներով գիտահետազոտական աշխատանք է ինչպես կոնսոցիատիվիզմի և խորհրդարանականության համադրման, այնպես էլ այդ առումով հետազոտական մոտեցումը ՀՀ օրինակով տեղայնացնելու համար:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսական աշխատանքի նպատակն է վեր հանել կոնսոցիատիվ ժողովրդավարության ձևավորման և կայացման գործընթացի առանձնահատկությունները, բացահայտել տեսության կիրառման միջազգային փորձը, ինչպես նաև՝ կոնսոցիատիվ ժողովրդավարության մոտեցման կիրառման հնարավորությունները և խոչընդոտները՝ ՀՀ օրինակով:

Առաջադրված նպատակին հասնելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները՝

- Վերլուծել կոնսոցիատիվ ժողովրդավարության տեսական և գործնական հիմքերը:
- Բացահայտել կոնսոցիատիվիզմի գործառության մեթոդաբանությունը և իրականացման մեխանիզմները:
- Համեմատել ժողովրդավարության կոնսոցիատիվ և այլ տեսությունները կոնսոցիատիվիզմի առանձնահատկությունների վերհանման նպատակով:
- Վերլուծել պետական կառավարման համակարգերը կոնսոցիատիվ ժողովրդավարության համատեքստում:
- Հետազոտել խորհրդարանական կառավարման համակարգի տիպերը և դրանց կիրառման առանձնահատկությունները:
- Հետազոտել խորհրդարանականության մշակույթի՝ որպես քաղաքական մշակույթի տեսագործնական խնդիրները:
- Վերլուծել խորհրդարանականության իրավական և քաղաքական բովանդակային ընկալումները:
- Հետազոտել լավ կառավարման տեսական ձևակերպումները և կիրառման առանձնահատկությունները:
- Բացահայտել ՀՀ կառավարման համակարգում խորհրդարանականության և համապատասխան քաղաքական մշակույթի գիտակիրառական խնդիրները:
- Պարզել համասեռ (homogeneous) հասարակություններում սեգմենտից ստրատա անցման հնարավորությունները և խնդիրը դիտարկել ՀՀ օրինակով:
- Վեր հանել ՀՀ խորհրդարանական կառավարման արդյունավետության նպատակով կոնսոցիատիվ մոտեցման կիրառման հնարավորությունները:

Հետազոտության օբյեկտը: Կոնսոցիատիվ ժողովրդավարության մոտեցման ուսումնասիրությունը խորհրդարանական կառավարման

համակարգում:

Հետազոտության առարկան: Ժողովրդավարության կոնսոցիատիվ մոտեցման կիրառման հնարավորությունը և հեռանկարները Հայաստանի խորհրդարանական կառավարման համակարգում:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության հիմքը կոնսոցիատիվիզմի և խորհրդարանականության այն տեսահայեցակարգային սահմանումներն ու կառուցողական հասկացություններն են, որոնք թույլ են տալիս ճիշտ մեթոդաբանության ընտրությամբ կոնսոցիատիվիզմի կիրառման հնարավորությունները դիտարկել ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգում: Այդ նպատակով օգտագործվել են մենագրություններ, գիտական հոդվածներ, իրավական փաստաթղթեր, միջազգային իրավունքի հիմնարար փաստաթղթեր, վերլուծական աշխատանքներ և այլն:

Հետազոտության մեթոդները: Ատենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած են միջգիտակարգային և նեղ մասնագիտական մեթոդներ՝ համեմատական, համակարգային, համատեքստի վերլուծության, կանխատեսման, վարքաբանական, մարդաբանական, առանձին դեպքի ուսումնասիրության և վերացարկման մեթոդներ: Սույն աշխատանքում վերոնշյալ հետազոտական մեթոդների ընտրությունը պայմանավորված է հետազոտվող գիտակարգերի խորը և համապարփակ ուսումնասիրության անհրաժեշտությամբ:

Հետազոտության գիտավարկածը: Խորհրդարանական կառավարման համակարգ ունեցող ՀՀ-ում, որին բնորոշ է համասեռ հասարակության ստրատիֆիկացիան, կոնսոցիատիվիզմի կիրառությամբ հնարավորություն կընձեռվի ապահովելու համահասարակական ներդաշնակություն և քաղաքական արդիականացման արդյունքում նշմարել ժողովրդավարության կոնսոցիատիվ ապագան:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսության մեջ իրականացված հետազոտությունները կոնսոցիատիվիզմի և խորհրդարանականության համադրությամբ էական ներդրում են ինչպես արդյունավետ պետական կառավարման, այնպես էլ կոնսոցիատիվիզմը ՀՀ օրինակով տեղայնացնելու նպատակներով: Փորձ է արվել վեր հանել այն հիմնական դրույթները, որոնք նպաստում են խորհրդարանականության պայմաններում կոնսոցիատիվիզմի արդյունավետ ներդրմանը:

Ատենախոսական աշխատանքում ստացվել են գիտական նորույթ պարունակող հետևյալ արդյունքները՝

1. Կոնսոցիատիվիզմը դիտարկվել է խորհրդարանական կառավարման համակարգում և հստակեցվել է, որ կոնսոցիատիվ ժողովրդավարության տեսությունը կիրառման ավելի լայն հնարավորություններ ունի խորհրդարանականության պայմաններում որպես լավ կառավարման դրսևորում:

2. Կոնսոցիատիվ ժողովրդավարության համատեքստում բազմակազմ հասարակության սեգմենտի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ

համասեռ հասարակություններում սեգմենտի փոխարեն կիրառելի է ստրատա գիտաբառը՝ որպես հասարակության շահերի համախմբման (aggregation of interets) և ներդաշնակ հասարակություն ձևավորելու երաշխիք:

3. Ապացուցվել է, որ խորհրդարանական կառավարման համակարգի արդյունավետությունը պայմանավորված է խորհրդարանականության քաղաքական մշակույթի առկայությամբ և կայացած կուսակցական համակարգի հաստատուն գործառությամբ:

4. Կոնսոցիատիվ ժողովրդավարության տեսության հետազոտության արդյունքում պարզ է դարձել, որ «կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելը» հիմնականում կիրառելի է բազմակազմ, անհամասեռ հասարակություններում, որտեղ առկա են հասարակության հատվածական (էթնիկ, մշակութային, կրոնական և այլն) շահերի տարբերություններ և անհրաժեշտ է պետության լավ կառավարման ապահովման նպատակով կառավարման համակարգում սեգմենտների միջև իշխանության կիսում իրականացնել:

5. Լրամշակվել և շրջանառության մեջ է դրվել «կոնսոցիատիվ ժողովրդավարության մոտեցումը»՝ որպես համասեռ հասարակություններում սոցիալական շերտերի միջև կոնֆլիկտային խնդիրների կարգավորման եղանակ, ինչպես նաև արդյունավետ համասոցիալական քաղաքականություն իրականացնելու գրավական:

6. Կոնսոցիատիվ ժողովրդավարության մոտեցման շրջանակներում առաջարկվել է ՀՀ արտաքին քաղաքականության արդիականացման նոր օրակարգ, որը նախատեսում է կարճաժամկետ և երկարաժամկետ օրակարգերի իրականացման տարբերակներ:

7. Արտաքին քաղաքականության արդիականացման օրակարգի կարճաժամկետ տարբերակը ենթադրում է միատարր ՀՀ պայմաններում արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների և առաջնահերթությունների քաղաքական արդիականացում: Երկարաժամկետ օրակարգի պայմաններում նախատեսվում է Արցախյան հիմնախնդրի կարգավորման նպատակով դաշնային պետության ձևավորում: Ենթադրելի է, որ սա կնպաստի տարածաշրջանում Հայաստանի՝ որպես ժողովրդավարություն «արտահանող» պետության քաղաքական կերպարի ձևավորմանը և կոնսոցիատիվ տարածաշրջանային բրենդի ուրվագծմանը:

Հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը: Հետազոտության տեսական նշանակությունը հիմնված է ժողովրդավարության վարչակարգի պայմաններում կոնսոցիատիվիզմի մոտեցման ընտրությամբ, որի նպատակն է քաղաքական գործընթացներում համամասնության սկզբունքով հասարակության բոլոր հատվածների ներգրավվածությունը: Տեսական նշանակությունը նաև պայմանավորված է կոնսոցիատիվիզմի և խորհրդարանականության ճիշտ համադրությամբ, որը թույլ է տալիս տարբեր պետությունների օրինակներով ստանալ համապատասխան արդյունքներ: Կիրառական նշանակությունը, մասնավորապես, պայմանավորված է ՀՀ

խորհրդարանական կառավարման համակարգում ներկայացուցչական մակարդակի ավելացմամբ, ինչը ներգրավման արդյունքում կնպաստի հնարավոր հասարակական դժգոհությունների և կոնֆլիկտային իրավիճակների մեղմելուն:

Ատենախոսության արդյունքների ներդրումը: Ատենախոսության արդյունքում ստացված գիտահետազոտական նյութը և դրանց հիման վրա մշակված մոտեցումները մասնավորապես օգտագործվել են ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում և ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում փորձագիտական վերլուծությունների և գիտակրթական ծրագրերի մշակման նպատակով:

Հետազոտության տվյալների փորձաքննությունը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական գիտակարգային դրույթները և արդյունքները քննարկվել ու զեկուցվել են՝ ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական սեմինար-քննարկումներում (2017-2019 թթ.), Եվրոպական համալսարանի «Իրավագիտության և միջազգային հարաբերություններ» ֆակուլտետի գիտական սեմինարներում (2019 թ.), Լեհաստանի Յագելոնյան համալսարանում «Երիտասարդ սերունդը դիմագրավում է Եվրոպայի և Ասիայի անվտանգության մարտահրավերներին» խորագրով միջազգային գիտաժողովում (2019 թ.), ՀՀ ՊԿԱ հիմնադրման 25-ամյակին նվիրված «Կառավարման ժամանակակից հիմնախնդիրները» 2-րդ միջազգային գիտաժողովում (2019 թ.), Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ «Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան» խորագրով միջազգային երիտասարդական 4-րդ գիտաժողովում (2019 թ.), ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի կողմից կազմակերպված «Հայաստան և հարևաններ. տարածաշրջանային ռազմաքաղաքական զարգացումները ՀՀ ազգային անվտանգային շահերի տեսանկյունից» խորագրով գիտաժողովում (2019 թ.) և այլն:

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են ութ գիտական հոդվածներում, ինչպես նաև ներկայացվել ու քննարկվել են տարբեր տեղական և միջազգային գիտաժողովների ընթացքում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ ութ ենթագլուխներով, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 177 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ նկարագրված է ատենախոսության թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, նպատակը և խնդիրները, օբյեկտը, առարկան, հետազոտության մեթոդները, աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը և այլն:

Առաջին գլխում՝ **«Կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի տեսամեթոդաբանական հիմքերը»** վերտառությամբ, նկարագրված են կոնսոցիատիվ ժողովրդավարության տեսահայեցակարգային հիմնական մոտեցումները և տարբեր գիտնականների կողմից մասնագիտական բնորոշումները:

Առաջին ենթագլխում՝ վերնագրված **«Կոնսոցիատիվ ժողովրդավարության տեսության համակողմանի վերլուծությունն ու արդիականության հիմնավորումը»**, անդրադարձ է կատարվում սեգմենտ, ստրատա, բազմակազմ հասարակություն, իշխանության կիսում և այլ գիտակիրառական հասկացություններին կոնսոցիատիվիզմի համատեքստում: Միաժամանակ, ներկայացվում են կոնսոցիատիվ ժողովրդավարության տեսության վերաբերյալ հիմնական քննադատական մոտեցումները:

Երկրորդ ենթագլխում՝ **«Կոնսոցիատիվ ժողովրդավարության կիրառական և մեթոդաբանական հիմքերը»** վերնագրով, ներկայացվում են կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի տեսամեթոդական գործառության հիմքը կազմող չորս սկզբունքները և դրանց կիրառության առանձնահատկությունները:

Երրորդ՝ **«Ժողովրդավարության կոնսոցիատիվ և այլ տեսությունների համեմատական վերլուծություն»** ենթագլխում, իրականացվել է կոնսոցիատիվ, վեստմինստերյան, պոլիարխիայի և մասնակցային ժողովրդավարության տեսությունների համեմատական վերլուծություն: Համեմատական վերլուծության արդյունքում վեր են հանվել ժողովրդավարության մոդելների հիմնական նմանությունները, տարբերություններն ու առանձնահատկությունները:

Երկրորդ գլխում՝ **«Խորհրդարանական կառավարման համակարգը և խորհրդարանականության մշակույթը կոնսոցիատիվիզմի համատեքստում»** վերտառությամբ, նկարագրված են խորհրդարանականության և կոնսոցիատիվիզմի համակցության հիմնական գիտահետազոտական դրույթները:

Առաջին ենթագլխում՝ վերնագրված **«Կառավարման համակարգերի համեմատական վերլուծությունը կոնսոցիատիվ ժողովրդավարության համատեքստում»**, ներկայացվել է խորհրդարանական և կառավարման այլ համակարգերի համեմատական վերլուծությունը: Հետազոտության արդյունքում փորձ է արվել ընդգծելու կոնսոցիատիվ ժողովրդավարության կիրառման արդյունավետությունը խորհրդարանական կառավարման համակարգի պայմաններում:

Երկրորդ՝ **«Խորհրդարանականության՝ որպես քաղաքական մշակույթի տեսագործնական հիմնախնդիրները»** ենթագլխում, հետազոտվել է «խորհրդարանականության քաղաքական մշակույթ» հասկացությունը: Անդրադարձ է կատարվել խորհրդարանականության քաղաքական և իրավական բնորոշումներին: Խորհրդարանականության մշակույթի համատեքստում մանրամասն քննարկվում են խորհրդարան-հասարակություն կապը և հասարակության ներկայացուցիչների հետ խորհրդարանականների համատեղ աշխատանքի և էթիկայի հարցերը: Վերլուծվում են նաև քաղաքացիական հասարակությանը, խորհրդարանականների էթիկետի դրսևորումներին և խորհրդարանական դիվանագիտությանը վերաբերող հարցեր:

Երրորդ ենթագլխում՝ վերնագրված **«Խորհրդարանական կառավարման համակարգի արդյունավետության հիմնավորումը կոնսոցիատիվ ժողովրդավարության համատեքստում»**, դիտարկվում է խորհրդարանական կառավարման համակարգի և կոնսոցիատիվիզմի համակցումը՝ որպես լավ կառավարման նախադրյալ: Հիմնավորվում է խորհրդարանական կառավարման համակարգի արդյունավետությունը կոնսոցիատիվ ժողովրդավարության կիրառման համատեքստում: Այս առումով քննարկվում են ժողովրդավարության քաղաքակրթական հիմքերը, լավ կառավարման և ժողովրդավարության ինստիտուցիոնալացման խնդիրները:

Երրորդ գլխում՝ **«ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգի առանձնահատկությունները և կոնսոցիատիվ ժողովրդավարության մոտեցման կիրառման հնարավորությունները»** վերտառությամբ, ներկայացվել են Հայաստանում կոնսոցիատիվ ժողովրդավարության մոտեցման կիրառման առանձնահատկությունները և ՀՀ-ի կոնսոցիատիվ ապագան: Համեմատական վերլուծության արդյունքում վեր են հանվել ՀՀ խորհրդարանականության, համապատասխան քաղաքական մշակույթի փորձը և զարգացման հնարավորությունները: Կոնսոցիատիվիզմը ՀՀ խոհրդարանականության պայմաններում դիտարկելու նպատակով առաջարկվել է ժողովրդավարության կոնսոցիատիվ մոտեցումը:

Առաջին՝ **«ՀՀ կառավարման համակարգում խորհրդարանականության մշակույթի ներդրման գիտակիրառական խնդիրները և դրա կայացման հեռանկարները»** ենթագլխում, համեմատական վերլուծության տեսքով ներկայացվել է ՀՀ խորհրդարանականության քաղաքական մշակույթը և փորձը: Ներկայացվել են Հայաստանի Առաջին Հանրապետության և ներկայիս Հայաստանի Հանրապետության միջև խորհրդարանականության նմանությունները և տարբերությունները:

Երկրորդ ենթագլխում՝ **«ՀՀ-ում խորհրդարանականության արդյունավետության բարձրացման նպատակով կոնսոցիատիվ մոտեցման կիրառման հնարավորությունը»** վերնագրով, առաջարկվում է «կոնսոցիատիվ մոտեցումը» համասեռ հասարակություններում կոնսոցիատիվիզմի կիրառման նպատակով: Վերլուծվել են միատարր պետություններում կոնսոցիատիվ

ժողովրդավարության կիրառման հնարավորությունները: Կոնսոցիատիվ մոտեցման համատեքստում արդիականացման տեսության միջոցով ներկայացվում են ՀՀ կոնսոցիատիվ արտաքին քաղաքականության հեռանկարները: Ներկայացվել է արտաքին քաղաքականության արդիականացման օրակարգ, որն ունի կարճաժամկետ և երկարաժամկետ տարբերակներ: Կարճաժամկետ օրակարգում նախատեսվել են արտաքին քաղաքական ուղղությունների, առաջնահերթությունների և խորհրդարանական դիվանագիտության արդիականացումը միատարր պետության շրջանակներում, իսկ երկարաժամկետ օրակարգում ներկայացվել են ՀՀ դաշնային պետության և Հայաստանի՝ որպես տարածաշրջանում ժողովրդավարություն «արտահանող» պետության հնարավորությունները և հեռանկարները:

Եզրակացության մեջ ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները, որոնցից հարկ է առանձնացնել հետևյալը.

1. Թեև չկան ժողովրդավարության վերաբերյալ միանշանակ, բոլորի կողմից ընդունված սահմանումներ, այնուամենայնիվ կան ժողովրդավարության բովանդակության անքակտելի մասը կազմող հիմնասյուներ՝ իրավունքի և օրենքի գերակայություն, ընտրական գործընթացներ, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանություն, որոնք ընդունելի են գրեթե բոլոր հետազոտողների կողմից և ընկած են ժողովրդավարության բոլոր տեսությունների հիմքում:

2. Ժողովրդավարության կոնսոցիատիվ տեսությունը պետական կառավարման համակարգում իրականացվող համասոցիալական քաղաքականություն է, որի նպատակն է իր չորս մեթոդական սկզբունքների կիրառման միջոցով (մեծ կոալիցիա, համամասնություն, փոխադարձ վետո և սեգմենտների ինքնավարություն) ապահովել հասարակության բոլոր սեգմենտների ներգրավումը և մասնակցությունը քաղաքական գործընթացներին ներդաշնակ հասարակություն ձևավորելու նպատակով: Ներդաշնակությունը ենթադրում է խուսափել հնարավոր կոնֆլիկտային իրավիճակներից և իշխանության արդարացի կիսմամբ և բոլորի կարիքների բավարարմամբ իրականացնել պետության լավ կառավարում:

3. Կոնսոցիատիվ ժողովրդավարության չորս հիմնական սկզբունքների կիրառումը և տարբեր պետություններում տեղայնացումը կարող է յուրովի փոփոխությունների ենթարկվել: Կիրառման մեթոդաբանության արդյունավետության ապահովման տեսանկյունից կարևոր է դրանց դասակարգումը հիմնական՝ մեծ կոալիցիա, սեգմենտների ինքնավարություն և օժանդակ՝ համամասնություն և փոխադարձ վետո սկզբունքների: Միևնույն ժամանակ պակաս կարևոր չեն կոնսոցիատիվ ժողովրդավարության վրա ազդող տնտեսական, մշակութային և տեղայնացման գործոնները: Կոնսոցիատիվիզմի չորս մեթոդական սկզբունքներից բացի նաև էական են կոնսոցիատիվիզմի կիրառման գործընթացին նպաստող գործոնները, որոնցից են՝ ընդհանուր

պետական շահի գիտակցումը, միևնույն արժեհամակարգի ժառանգորդ լինելը, քաղաքացիական գիտակցության բարձր մակարդակը և այլն:

4. Կոնսոցիատիվիզմի բովանդակային ընկալման և կիրառության տեսանկյունից կարևորվում են կոնֆեսիոնալիզմ* և կորպորատիզմ* հասկացությունները: Վերջիններս, լինելով կոնսոցիատիվիզմի հարակից հասկացություններ, նպատակաուղղված են համապատասխանաբար դավանաբանական և սոցիալական համախմբման եղանակով պետական կառավարման իրականացմանը: Կոնֆեսիոնալիզմը և կորպորատիզմը, փոխլրացնելով կոնսոցիատիվիզմի հայեցակարգային դրույթները, նպաստում են պետության կողմից իշխանության կիսամամբ համասոցիալական քաղաքականության իրականացմանը:

5. Կոնսոցիատիվիզմի փոխադարձ վետոյի սկզբունքի նպատակը ոչ թե այն պատեհ, անպատեհ կիրառելով քաղաքական որոշումների ընդունման գործընթացի տապալումն է, այլ իրավիճակի զսպումը և հավասարակշռումը: Հիմնական նպատակը մեծ կոալիցիայում փոխընդունելի որոշումների կայացումն է, այդ գործընթացին բոլոր հատվածների մասնակցությունն ու ընդհանուր որոշման պատասխանատվության ձևավորումն է: Այսպիսով, փոխադարձ վետոյի սկզբունքի իմաստը «քվեի ուժը» օգտագործելով որոշում կայացնողներին ստիպելն է, որ մեծ ու փոքր կողմերը մինչև որոշման ընդունումը բանակցեն և փոխզիջումային որոշումներ կայացնեն: Իրականում այս համամասնական մոտեցումը հիմնականում բնորոշ է կոնսոցիատիվ ժողովրդավարությանը և բացակայում է մեծամասնական ժողովրդավարություններում:

6. Սեգմենտներին ինքնավարություն կամ ինքնուրույնություն տալը չի ենթադրում անջատողական մոտեցումներ, առավել ևս սեգմենտների՝ որպես պետականակերպ սուբյեկտի ինքնորոշմանը: Խոսքը վերաբերում է համասոցիալական կառավարման գործընթացում սեփական ճակատագրի տնօրինման գործերում հասարակության բոլոր հատվածների ներգրավվածությանը, որը միաժամանակ թույլ կտա իրականացնել արդյունավետ քաղաքականություն, պետական ապարատում մի շարք քաղաքական ինստիտուտներին, տեղական ինքնակառավարման մարմիններին ճիշտ մշակված գործելաոճի և պետական միջոցների օպտիմալացմամբ: Օրինակ՝ ԱՄՆ-ն իր դաշնային սուբյեկտներին օժտել է դաշնային նշանակության օրենսդրության և տեղական ինքնակառավարման հարցերում լիազորություններով:

---

* Եզրույթի հայերեն համարժեքն է՝ «դավանավարություն» և «դավանականություն»: Տե՛ս Գույումճեան Մ., Տօնիկեան Կ. և Եղբայրք, Ընդարձակ Բառարան Անգլիերէնէ Հայերէն, Պէյրութ, 1981, էջ 276:

* Եզրույթի հայերեն համարժեքն է՝ «համքարավարություն»: Տե՛ս Քաղաքագիտության և քաղաքականության Օքսֆորդի բացատրական բառարան, Խմբ. Ա. Մակլին, Լրացումները և հավել. բառարանը՝ Ա. Աղաբեկյան, Գիտանք հրատ., Երևան, 2003, էջ 127:

7. Կարևոր է ոչ միայն պետական կառավարման համակարգի, այլև ժողովրդավարության արդյունավետ մոդելի ընտրությունը: Ժողովրդավարության բոլոր տեսություններում առկա է մասնակցային բաղադրիչ, քանի որ առանց հասարակական-քաղաքական կյանքին մասնակցության, առհասարակ, անհնարին կլիներ ժողովրդավարության գործառումը: Վեստմինստերյան ժողովրդավարությունը, լինելով մեծամասնական ժողովրդավարության մոդել, անտեսում է հասարակության բոլոր հատվածների շահերը և պատշաճ ներկայացվածությունը, իսկ քաղաքական գործընթացներին մասնակցությունն իրականացվում է նեղ խմբային շահերի բավարարման հիմքով: Մինչդեռ կոնսոցիատիվ ժողովրդավարությունը, որպես համամասնական մոդել, իշխանության կիսմամբ՝ հաշվի է առնում քաղաքական գործընթացներում բոլոր հատվածների մասնակցությունը և շահերը:

8. Պետական կառավարման համակարգի վերլուծությունը ցույց է տալիս, որ խորհրդարանականության կիրառման նպատակով ավելի համահունչ է ժողովրդավարության կոնսոցիատիվ տեսությունը, քանի որ ներկայացուցչականության, իշխանության կիսման և համասոցիալական ներգրավվածության հարցերը զուգամիտվում են խորհրդարանական ժողովրդավարության պայմաններում: Այս առումով հարկ է նշել, որ խորհրդարանականությունն ավելի շատ կիրառական գործունեության ոլորտ է, քան տեսական և հայեցակարգային միջոցների ամբողջություն: Խորհրդարանականության համատեքստում նաև կարևորվում է կառավարման համակարգի սեփական մոդելների՝ խորհրդարանական հանրապետության և սահմանադրական միապետության ընտրության հարցը:

9. Խորհրդարանակությունը բովանդակային ընկալմամբ ունի իրավական և քաղաքական իմաստ: Իրավականը վերաբերում է խորհրդարանում օրենսդիր գործունեությանը և այլ իրավական ձևակերպումներին, որոնք ամբողջանում են խորհրդարանական իրավունքի գիտակարգում: Քաղաքական առումով կարևորվում է խորհրդարանի քաղաքական գործընթացներում կիրառականության հարցերը: Պատահական չէ, որ խորհրդարանն ավելի շատ քաղաքական գործունեության ոլորտ է, որտեղ, իհարկե, կան իրավական ընթացակարգային կարգավորումներ, սակայն կառավարման համակարգի էությունը վերաբերում է քաղաքական նպատակների և դրան հասնելու համար հատուկ նպատակների գործառմանը: Միաժամանակ, այս երկու հասկացությունները փոխկապակցված են, միմյանցից անջատ չեն գործում՝ նպաստելով արդյունավետ խորհրդարանական կառավարմանը:

10. Խորհրդարանական կառավարման համակարգում կարևոր հարցերից են խորհրդարանականության քաղաքական մշակույթի ձևավորման և զարգացման խնդիրները: Առհասարակ, կառավարման համակարգերն առանց համապատասխան քաղաքական մշակույթի առկայության անարդյունավետ են: Այդուհանդերձ, խորհրդարանականությունը, որպես քաղաքական մշակույթի բաղկացուցիչ մաս, ենթադրում է զարգացման հարահոս գործընթաց, սակայն դա

չի նշանակում, որ ճիշտ մշակված ռազմավարական մոտեցումների արդյունքում խորհրդարանականության ուղին ընտրած պետությունները չեն կարող ձեռք բերել համապատասխան քաղաքական մշակույթ: Իր հերթին խորհրդարանականության մշակույթը ներառում, բայց չի սահմանում խորհրդարան-հասարակություն խոսույթի ապահովումը, քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացումը և տվյալ կառավարման համակարգից բխող խորհրդարանական դիվանագիտության արդիականացումը: Այս առումով պետք է բովանդակային տարբերություններ լինեն, օրինակ՝ կիսանախագահական և խորհրդարանական կառավարման համակարգ ունեցող պետության խորհրդարանական դիվանագիտության ուղեգծի մասով:

11. Խորհրդարանական կառավարման համակարգի արդյունավետությունը նաև պայմանավորված է կայացած կուսակցական համակարգի առկայությամբ: Կուսակցական համակարգի կայացվածության բաղադրիչները ներառում են՝ կուսակցությունների ինստիտուցիոնալացումը, գաղափարահենք, քաղաքականապես մրցունակ և քաղաքական մրցակցության նպատակով ռեսուրսների տիրապետող կուսակցությունների առկայությունը: Կոնսոցիատիվիզմի համատեքստում կուսակցական համակարգի կայացվածության հայեցակետերը ներառում են՝ բազմակուսակցական համակարգի առկայություն, խորհրդարանում հասարակության բոլոր շերտերի շահերը ներկայացնող կուսակցությունների առկայություն և կուսակցապետության արատավոր դրսևորումներից հրաժարում: Վերջինիս վառ օրինակներից է խորհրդարանում կայուն մեծամասնության սկզբունքը, որի փոխարեն նախընտրելի է ներդնել համամասնության սկզբունքով խորհրդարանական կառավարումը:

12. Կոնսոցիատիվիզմի տեսանկյունից խորհրդարանականության հիմնավորումը պայմանավորված է երեք փոխպայմանավորող տարրերով: Առաջին, ժողովրդավարության նախադրյալներից է պատմամշակութային և քաղաքակրթական հիմքերի առկայությունը, որը թույլ է տալիս պետություններին ուրվագծել սեփական ժողովրդավարական զարգացման տեսլականը: Երկրորդ, կարևորվում է իշխանության կիսման, ներդաշնակ հասարակության ձևավորման և համասոցիալական քաղաքականության վարումը, որն իր հերթին նախատեսում է օրենսդրական գործընթացի լեգիտիմացում, այն է՝ հասարակության բոլոր շերտերի համար փոխընդունելի որոշումների կայացում և համակեցության նորմերի ձևավորում: Եվ երրորդ, ժողովրդավարության ինստիտուցիոնալացում, որը նախատեսում է պետական կառավարման ինստիտուտների և քաղաքացիական հասարակության կայուն զարգացում, որի հիմքը պետք է հանդիսանա «մարդ-քաղաքացու» ինստիտուտի ձևավորումը՝ համապատասխան իրավագիտակցությամբ:

13. ՀՀ-ում քաղաքական մշակույթի ձևավորման առանձնահատկությունների վերհանման նպատակով իրականացված համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Առաջին

Հանրապետության (ՀԱՀ) և ներկայիս Հայաստանի Հանրապետության խորհրդարանական կառավարման և համապատասխան քաղաքական մշակույթի միջև էական նմանություններ և տարբերություններ կան: Մասնավորապես, կուսակցական համակարգի կայացածության առումով երկու դեպքում էլ խորհրդարանում բացարձակ մեծամասնությունը պատկանում է մեկ ուժին (մի դեպքում՝ ՀՅԴ, մյուս դեպքում՝ ՔՊԿ), ինչն ավելի շատ բխում է մեծամասնական ժողովրդավարության բնույթից: Մինչդեռ կոնսոցիատիվ ժողովրդավարությունը նախատեսում է պետական կառավարման համակարգում իշխանության կիսմամբ համասոցիալական քաղաքականության իրականացում, քաղաքական մասնակցության միջավայրի ձևավորում և այլն: Նմանություններ նաև առկա են խորհրդարանականության քաղաքական մշակույթի առումով երկու դեպքում էլ, թեև առկա են բոլոր պայմանները խորհրդարանականության մշակույթի ձևավորման համար, այնուամենայնիվ, ՀՀ-ում խորհրդարանականության մշակույթը դեռևս գտնվում է առաջընթաց զարգացման փուլում: Հիմնական տարբերությունը, թերևս, վերաբերում է նախագահի ինստիտուտի գոյությանը, որը ՀԱՀ ժամանակաշրջանում չկար:

14. Կոնսոցիատիվ ժողովրդավարությունը կարող է կիրառվել ինչպես բազմակազմ, անհամասեռ հասարակության մեջ, այնպես էլ՝ միատարր, համասեռ հասարակություններում: Համասեռ հասարակության դեպքում խնդիրը դիտարկվում է ոչ թե կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի կիրառությամբ, այլ կոնսոցիատիվիզմի գաղափարական հիմքով՝ «կոնսոցիատիվ մոտեցմամբ»: Կոնսոցիատիվ մոտեցման էությունն այն է, որ համասեռ հասարակություններում նույնպես կարող են սոցիալական շերտերի և խմբերի միջև խնդիրներ առաջանալ և սույն մոտեցման նպատակը դրանք կարգավորելն է շահերի համախմբման, համասոցիալական քաղաքական սկզբունքներով: Կոնսոցիատիվ մոտեցումը նաև նախատեսում է տեղական ինքնակառավարման մարմինների օպտիմալ և արդյունավետ գործունեություն՝ նրանց տրամադրելով ինքնուրույնություն: Ավելին, կոնսոցիատիվ մոտեցման հիմքում ընկած է կոնսոցիատիիվ քաղաքականության մշակումը և իրականացումը:

15. Համասեռ հասարակություններում կոնսոցիատիվ մոտեցման կիրառման հիմնախնդիրներից մեկը հասարակության սեգմենտը ստրատայով փոխարինելն է: Հայաստանում ստրատիֆիկացիայի խնդիրները բազմաթիվ են, մասնավորապես, մինչ օրս բավարար թվով հետազոտություններ չկան, որոնք հստակ կներկայացնեն ՀՀ-ում ստրատաների դասակարգումը, ոլորտները, քաղաքականացվածության աստիճանը և այլն: Այս առումով կարող ենք նշել, որ ՀՀ ստրատիֆիկացիայի վերաբերյալ հիմնարար հետազոտությունը բարդ և լրացուցիչ հետազոտության թեմա է: Ի տարբերություն հատվածական անհամասեռ հասարակության՝ համասեռ շերտավորված հասարակության մեջ առկա խնդիրները խորը հակասական վիճակում չեն գտնվում, դրանք կարելի է կարգավորել բավարար ջանքերի գործադրման և փոխադարձ շահերի ապահովման համասոցիալական քաղաքականության միջոցով:

16. ՀՀ-ում կոնսոցիատիվ մոտեցման և կոնսոցիատիվ քաղաքականության կիրառման նպատակով կարևորվում է ՀՀ արտաքին քաղաքականության արդիականացումը: Այդ նպատակով ներդրված արդիականացման օրակարգը բաղկացած է երկու տարբերակներից, որոնք կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ուղենշում են ՀՀ արտաքին քաղաքականության վարման կոնսոցիատիվ մոտեցումները: Կարճաժամկետ ժամանակահատվածում նախատեսվում է ՀՀ միատարր արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների և դրանից ածանցված առաջնահերթությունների կոնսոցիատիվիզմի տեսանկյունից վերաիմաստավորում: Երկարաժամկետ հեռանկարում նախատեսում է կարճաժամկետ օրակարգի բարեհաջող փորձի արդյունքներով նպաստել դաշնային Հայաստանի ձևավորմանը:

Հաշվի առնելով ատենախոսական աշխատանքի արդյունքում արված հիմնական եզրակացությունները՝ ստորև ներկայացվում են մի շարք **առաջարկություններ՝**

1. Պետական կառավարման համակարգում կոնսոցիատիվիզմի կիրառումը դիտարկել ինչպես անհամասեռ, այնպես էլ համասեռ հասարակությունների օրինակներով՝ նպաստելով իշխանության կիսմամբ պետության համասոցիալական քաղաքականության իրականացմանը:

2. Ելնելով կոնսոցիատիվ մոտեցման էությունից՝ չորս մեթոդական սկզբունքների գործառման հարցում առաջնորդվել այն մոտեցմամբ, որ դրանք աքսիոմներ չեն և միշտ կարելի է կիրառման արդյունավետությամբ պայմանավորված արդիականացնել:

3. Խորհրդարանական կառավարման համակարգի կենսագործումը զուգորդել համապատասխան խորհրդարանական քաղաքական մշակույթի ձևավորմամբ և զարգացմամբ: Այն պետք է նպաստի խորհրդարանականության ավանդույթների և խորհրդարան-հասարակություն ամուր հիմքերի ձևավորմանը:

4. Նպաստել ՀՀ-ում կուսակցական համակարգի կայացմանը, որպես կայուն պետական կառավարման և խորհրդարանականության ինստիտուցիոնալացման գլխավոր երաշխիք:

5. Խորհրդարանական կառավարման համակարգում վերամշակել և զարգացնել որակապես նոր խորհրդարանական դիվանագիտություն, որը պետք է էական տարբերություն ունենա Հայաստանի կիսանախագահական խորհրդարանական դիվանագիտությունից:

6. ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգում զուգամիտել խորհրդարանականության իրավական և քաղաքական բովանդակային ընկալումները՝ որպես խորհրդարանական պետության զարգացման նախապայման:

7. ՀՀ խորհրդարանական կառավարման ներկայիս գործընթացները զուգորդել ոչ միայն տեղական՝ Հայաստանի Առաջին Հանրապետության փորձի, այլև խորհրդարանականության միջազգային տեսագործնական հենքով:

8. ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգում կոնսոցիատիվիզմի գաղափարահենք գործառման նպատակով ներդնել «կոնսոցիատիվ մոտեցումը», որտեղ կուրվագծվի համասեռ հասարակության պայմաններում ՀՀ-ում կոնսոցիատիվիզմի ուղին:

9. Հաշվի առնելով կոնսոցիատիվիզմի կիրառության ճկունությունը միատարր և դաշնային պետություններում՝ նախատեսել և ձևակերպել Հայաստանի դաշնային զարգացման ապագան:

10. Իրականացնել ՀՀ արտաքին քաղաքականության արդիականացում, որը կունենա արդիականացման օրակարգ, իր կարճաժամկետ և երկարաժամկետ տարբերակներով:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլվել են հետևյալ գիտական հոդվածներում՝

1. Գրիգորյան Ն., Խորհրդարանական կառավարման համակարգի տեսագործնական հիմնախնդիրները, Լրաբեր հասարակական գիտություններ, № 1, (658), 2020, էջ 168-177:

2. Գրիգորյան Ն., Կոնսոցիատիվ ժողովրդավարության տեսագործնական հիմքերը, Գիտական Արցախ, № 1 (4), 2020, էջ 37-42:

3. Գրիգորյան Ն., Խորհրդարանական կառավարման համակարգի արդյունավետության հիմնավորումը կոնսոցիատիվ ժողովրդավարության համատեքստում, Տարածաշրջան և աշխարհ, Հատոր XI, № 2, 2020, էջ 31-35:

4. Գրիգորյան Ն., Կոնսոցիատիվ մոտեցում կոնսոցիատիվիզմի կիրառման առանձնահատկությունները միատարր պետություններում և համասեռ հասարակություններում, Եվրոպական Համալսարան գիտական հոդվածների ժողովածու, № 11 (1), 2020, էջ 547-556:

5. Grigoryan N., Civilisational Bases of Democracy: The Role of Citizenship in Security and Democracy Institutionalization, SDirect24 Scientific Journal, № 2 (12), 2020, pp. 31-36.

6. Գրիգորյան Ն., Ժողովրդավարության կոնսոցիատիվ և այլ տեսությունների համեմատական վերլուծություն, ՀՀ ՊԿԱ հիմնադրման 25-ամյակին նվիրված «Կառավարման ժամանակակից հիմնախնդիրները» 2-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, 2019, էջ 237-248:

7. Գրիգորյան Ն., Խորհրդարանականության քաղաքական մշակույթը՝ որպես պետական կառավարման համակարգի արդյունավետության ապահովման կարևոր գործոն, Հայկական Բանակ, № 4 (102), 2019, էջ 28-34:

8. Գրիգորյան Ն., Կոնսոցիատիվ ժողովրդավարության կիրառությունը պառլամենտարիզմի համատեքստում, Կրթությունը և գիտությունը Արցախում, № 3-4, 2018, էջ 132-139:

ГРИГОРЯН НАРЕК ГРАНТОВИЧ

ЭФФЕКТИВНОСТЬ ПОДХОДА КОНСОЦИАТИВНОЙ ДЕМОКРАТИИ В СИСТЕМЕ ПАРЛАМЕНТСКОГО ПРАВЛЕНИЯ (НА ПРИМЕРЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ)

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 – "Политические институты и процессы, международные отношения".

Защита состоится 09 октября, 2020 г., в 12:00 часов на заседании специализированного совета 056 "Политология" ВАК РА, действующего по адресу ул. А. Манукяна 1, 0025, г. Ереван, Республика Армения.

РЕЗЮМЕ

Целью данной диссертационной работы является выявление особенностей процесса формирования и реализации консоциативной демократии, представление международного опыта применения теории, возможностей и препятствий для применения подхода консоциативной демократии в РА. Были также изучены предпосылки возникновения консоциативизма в Армении: наличие основных опор, на которых долнжо строиться будущее консоциативной демократии РА.

Проблемы теории консоциативной демократии вытекают из основной цели существования и соответствия предпосылок консоциативизма. В этом отношении основные проблемы связаны с раскрытием теоретико-практической основы и методологии консоциативной демократии, сочетанием подхода консоциативной демократии и системы парламентского правления, изучением типологии парламентаризма и проведением сравнительного анализа с другими системами правления.

Не менее важно и исследование политической культуры и культуры парламентаризма, в том числе юридического и политического значения и восприятия парламентаризма, изучение теоретико-практических формулировок и практического использования хорошего управления, изучение опыта парламентаризма на национальном и международном уровнях, осуществления модернизации внешней политики РА с учетом краткосрочных и долгосрочных перспектив.

В первой главе – **"Теоретико-методологические основы модели консоциативной демократии"** – представлены основные теоретико-концептуальные подходы демократии. В контексте консоциативизма обсуждены вопросы сегмента, слоя многосоставного общества, деления власти и других научных концепций. Отдельно представлены большая коалиция, взаимное вето, принцип пропорциональности, автономия сегментов или федерация как основные части модели консоциативной демократии. В конце главы проведен

сравнительный анализ между консоциативными и другими моделями демократии: вестминстерская демократия, демократия участия и полиархия. В результате сравнительного анализа были выявлены сходства и различия основных моделей демократии.

Во второй главе – **"Парламентская система правления и культура парламентаризма в контексте консоциативизма"** - представлены основные научно-исследовательские положения о сочетании парламентаризма с консоциативизмом. В первом подразделе проведен сравнительный анализ систем государственного правления. Были классицированы два основных типа: конституционная монархия и парламентская республика. Одновременно в контексте культуры парламентаризма представлены правовые и политические особенности парламентского правления. Понятие "культура парламентаризма" рассматривается и анализируется в отдельной главе. В этом контексте подробно обсуждаются вопросы парламентаризма и совместной работы парламентариев с представителями общества. Изучены и выявлены трудности и перспективы развития гражданского общества, парламентской этики и парламентской дипломатии. Обсужден вопрос эффективности парламентской системы правления в контексте применения консоциативной демократии.

В третьей главе – **"Особенности системы парламентского правления РА и возможности применения подхода консоциативной демократии"** - представлены особенности применения подхода консоциативной демократии в Армении и, в целом, будущее консоциативизма в РА. Также был проведен сравнительный анализ особенностей парламентаризма Первой Республики Армении и нынешней. В результате сделана попытка представления консоциативизма на примере однородных государств, и для этого был разработан "подход к консоциативной демократии". В конце главы раскрываются предпосылки развития совместной внешней политики РА в контексте теории модернизации. Представлена повестка модернизации внешней политики с учетом краткосрочных и долгосрочных вариантов. В долгосрочной перспективе изучены и выявлены трудности и перспективы создания федеративного государства РА, и применения консоциативной демократии в Южно-кавказском регионе.

NAREK GRIGORYAN

EFFECTIVENESS OF THE CONSOCIATIVE DEMOCRACY APPROACH IN THE PARLIAMENTARY GOVERNANCE SYSTEM (THE CASE OF THE REPUBLIC OF ARMENIA)

Dissertation under 23.00.02 - "Political Institutions and Processes, International Relations" aspiring to earn PhD in Political Science.
The public defense will take place on October 09, 2020, at 12:00 at the Yerevan State University, at 056 "Political Science" HAC Specialized Chamber session (Address A. Manukyan str. 1, Yerevan 0025, Republic of Armenia).

SUMMARY

The aim of the thesis is to identify the peculiarities of the process of formation and effectuation of consociative democracy, to present the international experience of applying the theory, as well as the possibilities and obstacles for applying the approach of consociative democracy, on the example of the Republic of Armenia. Concerning the existence of preconditions of the consociativism in Armenia we refer the evidence of those main pillars upon which the future of the RA consociative democracy should be set.

The problems of practicing theory of consociative democracy stem from the main purpose of the existence and correspondence of consociativism preconditions. In this regard, the main problems for the investigation of theoretical-practical basis and methodology of consociative democracy are: to combine consociative democracy approach and parliamentary governance systems; to study typology of parliamentarism and carry out a comparative analysis between other governance systems.

Nevertheless, the investigation of political culture and its part of parliamentarism culture; the analysis of legal and political content perceptions of parliamentarism; the study of theoretical-practical formulations and practical use of good governance; the view of parliamentarism, and the combination of respective culture as a main precondition of good governance; the study of experience for national and international level of parliamentarism; the implementation of modernization for the RA foreign policy by clearly forming modernization agenda with its short-term and long-term options are important.

The first chapter, entitled "**Theorical and Methodological Bases of the Consociative Model of Democracy**", presents consociative democracy's theoretical-conceptual main approaches and professional approaches by different politicians. In the context of consociativism we touched upon segment, stratum, plural society, power-sharing and other scientific concepts. In the separate subchapter four principles as part of the methodical functional base of consociative democracy model and features of those practices are presented. Here the operational objectives and

features of consociativism four main principles are given. At the end of the chapter a comparative analysis is made between consociative and other models of democracy. In this regard, the main models of comparative analysis are: the westminster democracy, participatory democracy and polyarchy. The main similarities, differences, features of democracy models are revealed in the result of a comparative analysis.

The second chapter, entitled **"Parliamentary Governance System and Culture of Parliamentarism in the Context of Consociativism"**, introduces the main scientific research provisions of the combination of parliamentarism and consociativism. In the first subchapter a comparative analysis of public administration systems is carried out. The concept of parliamentary governance system is spoken about mentioning its main definitions and typology. The two main types have been classified matter with typology such as constitutional monarchies and parliamentary republics. The concept of "culture of parliamentarism" is examined and analyzed in the separate subchapter. Political and legal attributes of parliamentarism are specifically discussed. In the context of culture of parliamentarism, parliament-society and joint work questions of parliamentarians with society representatives are spoken about and discussed in detail. Civil society, parliamentary ethics and parliamentary diplomacy are addressed in detail. As a final point, an attempt is made to substantiate the effectiveness of the parliamentary system of governance in the context of consociative democracy application.

The third chapter, entitled **"Peculiarities of the RA's Parliamentary Governance System and Opportunities for Applying a Consociative Democracy Approach"**, presents the features of practicing consociative democracy approach in Armenia and the consociative future of the RA. In the first subchapter the comparative experience of parliamentarism and respective political culture is presented by local example. The commonalities and features of parliamentarism between the First Republic of Armenia and the current Republic of Armenia are presented. In the second subchapter an attempt has been made to present consociativism on the example of homogeneous states and for that purpose the "consociative democracy approach" has been developed. At the end of the chapter the development of the RA consociative foreign policy is presented within the context of modernization theory. The modernization agenda of foreign policy is presented with its short-term and long-term options. The modernization of foreign political directions priorities, features and parliamentary diplomacy in the frames of unitary states is provided at short-term agenda, while at long-term agenda the possibilities and prospects of the RA federal state are introduced to addresses the future issues of transmitting consociative democracy in the South Caucasus Region.